ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/06.2.3/12416

«19» «11» 2024

«Էքսկոշին» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Վարդան Ղուկասյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էքսկոշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2023 թվականի դեկտեմբերի 15-ին կնքվել է «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-24/01» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն Պայմանագրի 1.1 կետի՝ Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

Բազմիցս գրություններով Պատվիրատուն նշել է, որ պարբերաբար ջանքեր է գործադրել Պայմանագրի կատարման և Կապալառուի կողմից ներկայացրած հարցերը լուծելու ուղղությամբ: Բարձրացված հարցերի լուծման արդյունքում Կապալառուն բավարար ջանք չի գործադրել և միջոցներ չի ձեռնարկել Պայմանագրի կատարման համար: Փոխարենը՝ Կապալառուն գրություններով տարբեր պատճառաբանություններ ներկայացնելով փորձել է հասնել Պայմանագրի փոխադարձ համաձայնությամբ լուծմանը, ինչին Պատվիրատուն անդրադարձել է Կապալառուին ուղղված 2024 թվականի հունիսի 10-ի №5/06.2.3/6471 գրությամբ, որտեղ նշվել է, որ Պայմանագրի լուծման դեպքերը և հիմքերն ամրագրված են Պայմանագրի 8.8 կետով, ինչպես նաև

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
+374 11 818 520 | +374 11 818 506

Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 9-րդ ենթակետով: Ընդ որում, Կապալառուի ներկայացված պատճառաբանություններն անընդունելի են Պատվիրատուի համար, քանի որ Կապալառուն ունեցել է բավարար ժամանակ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար, իսկ 2024 թվականի հոկտեմբերի 21-ի Կապալառուի գրությամբ ներկայացված տեղեկատվությամբ («...եղանակային բարենպաստ պայմաններով պայմանավորված ս.թ. մայիսի 25-ին ընկերության ներկայացուցիչը և համապատասխան մասնագիտական կազմը տարածքում փաստացի չափագրումների արդյունքում արձանագրել է...») հայտնի չէ մասնագիտական կազմը, ինչու՞ աշխատանքներում չեն ընդգրկվել Պատվիրատուի, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչները, ի՞նչ փաստաթուղթ է կազմվել աշխատանքների արդյունքում և ի՞նչ քայլեր են ձեռնարկվել հետագա ընթացքն ապահովելու համար, ինչու՞ է Պատվիրատուն տեղեկացվում այդ մասին շուրջ 5 ամիս հետո: Կապալառուն չի պարզաբանել նաև 2024 թվականի հոկտեմբերի 15-ի №5/06.2.3/11386 գրությամբ Պատվիրատուի հարցադրումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էքսկոշին» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, և հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետը՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պայմանագրի կատարման ապահովման գումարը, ինչը կազմում է 3 278 428 (երեք միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր քսանութ) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 4 917 642 (չորս միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ, ինչպես նաև Պայմանագրի 6.3 կետով նախատեսված և հաշվարկված տուգանքի գումարը՝ 163 500 (մեկ հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր, հաշվարկը՝ 32 700 000 x 0.5%) ՀՀ դրամի չափով, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 հաշվեհամարին և շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել վճարման անդորրագրերի պատճենները կամ դրանք տրամադրել gnumner@env.am էլեկտրոնային փոստի հասցեով:

Նշված ժամկետում գանձապետական հաշիվներին ապահովումները չփոխանցելու դեպքում կձեռնարկվեն միջոցներ՝ միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների հիման վրա գանձումները կատարելու և գնումներին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի

լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

բ) մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

11/19/2024

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Signed by: ATANESYAN SERGO 4007880425 Սերգո Աթանեսյան

Ֆինանսատնտեսական վարչության
Ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Լիլիթ Զոհրաբյան 011 818 529

Բնության հատուկ պահպանվող տարածքների և
կենսաբազմազանության քաղաքականության վարչություն
Հակոբ Մաթևոսյան 011 818 514

Իրավաբանական վարչություն
Արմինե Հովհաննիսյան 011 818 538